«Հայաստան-Ֆուտուրա»

գաղափարների մրցույթի պայմանները

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը (ՄԱԶԾ Հայաստան՝ «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր՝ մարզաբնակ երիտասարդների համար» ծրագրի շրջանակներում և «Հայկական կինոյի ինդուստրիալ զարգացում» մշակութային հիմնադրամը 2019թ. մայիսի 9-13-ը ՀՀ Լոռու մարզում կայանալիք «Երևանի կարճամետրաժ ֆիլմերի 2-րդ փառատոն»-ի շրջանակում հայտարարում են կարճամետրաժ ֆիլմի (մինչև 10 րոպե տևողությամբ) գաղափարների մրցույթ «Հայաստան-Ֆուտուրա» թեմայով:

Մրցույթի նպատակն է կարճամետրաժ ֆիլմի գաղափարների միջոցով ներկայացնել Հայաստանի ապագայի հնարավոր սցենարների ընկալման նկարագիր/վիզուալիզացիա: Մրցույթի շրջանակներում կընտրվեն ֆուտուրիստական սցենարներ, որոնք վերաբերում են ապագայի հասարակական, տեխնոլոգիական, սոցիալ-մշակութային և տնտեսական զարգացումներին:

Մասնակցության պայմանները

1. Մրցույթին կարող են մասնակցել 18-35 տարեկան անձինք՝ ինչպես ուսանող, այնպես էլ շրջանավարտ սցենարիստներ, ռեժիսորներ, օպերատորներ, մուլտիպլիկատորներ և այլ հետաքրքրված անձինք:
2. Ուղարկված հայտերից հանձնաժողովը ըստ մրցույթի պայմանների և ներկայացված գաղափարների գեղարվեստական արժեքի կհայտարարի երեք գաղափարներ, որոնք կանցնեն մրցույթի հաջորդ փուլ:
3. Ընտրված երեք գաղափարի հեղինակները հետագայում կաշխատեն սցենարի զարգացման մասնագետի հետ (Script Doctor՝ զարգացնելով գաղափարը և հասցնելով այն լիարժեք սցենարի:
4. Սցենարները պատրաստ լինելուն պես, հեղինակները կպաշտպանեն իրենց նախագծերը, իսկ հանձնաժողովը ներկայացված երեք սցենարներից հաղթող կճանաչի մեկին: Հաղթող ֆիլմի սցենարը կստանա ֆինանսական աջակցություն նկարահանման համար, որը կլինի

ՄԱԶԾ Հայաստանի «Ապագայի հմտություններ և աշխատատեղեր՝ մարզաբնակ երիտասարդների համար» ծրագրի և «Հայկական կինոյի ինդուստրիալ զարգացում» մշակութային հիմնադրամի համատեղ աջակցությամբ:

5. Ֆիլմի հատուկ ցուցադրությունը տեղի կունենա 2020թ. «Երևանի կարճամետրաժ ֆիլմերի 3-րդ փառատոն» -ի շրջանակում:
6. Նկարահանված կարճամետրաժ ֆիլմի բոլոր իրավունքները պատկանելու են ՄԱԶԾ Հայաստանին և «Հայկական կինոյի ինդուստրիալ զարգացում» մշակութային հիմնադրամին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ուղարկել հայտ մինչ ս.թ. մայիսի 3-ը ysffscript@gmail.com էլ.փոստին:

Հաջորդ փուլ անցած մասնակիցները կտեղեկացվեն էլ. փոստի միջոցով մինչև ս.թ. մայիսի 9-ը:

Հայտը անհրաժեշտ է ներկայացնել հայերեն լեզվով:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել ծրագրի համակարգող Անի Խաչատրյանին՝ 091 189475:

«Ապագայի հմտություններ և աշխատատեղեր՝ մարզաբնակ երիտասարդների համար» ծրագիրը ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության և իրականացվում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ: